

Կ. ՅՈՒՋՐԱՇՅԱՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՎ
ՏԱՐԸՆԹԵՐՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ՝

ՎՌԱՆԳՔ ԵՎ ՈՋ ՓՌԱՆԿՔ

Ինչպես հայտնի է, Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» բնագիրը հրատարակվել է առաջին անգամ 1844 թ., Վենետիկում, հինգ ձեռագրի համաձայնությամբ¹։ Հաջորդ՝ Վենետիկի 1901 թ. և Թիֆլիսի 1912 թ. հրատարակությունները արտատպություն են։ Եվ ահա, այդ հրատարակության համապատասխան տեղում կարդում ենք, որ հայոց 503 թվականին (1054/55), երբ սելջուկները արշավել էին Անգղիկովհաս, Բաբերդի մոտ նրանց հանդիպում է «զունդ մի ի զօրացն հոռոմոց, որ կոչին փռանկք, որք յանգէտս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան»²։

«Փռանկք» (ֆռանկներ) բառի վրա չի կասկածել ոչ աշխարհաբար թարգմանիչը³ և ոչ ֆրանսերեն թարգմանիչը։ Վերջինս ծանոթագրության մեջ նշում է, որ այդ ժամանակ Եվրոպայի տարբեր մասերից եկած բազմաթիվ ֆռանկներ, հատկապես նորմաններ, ծառայում էին բյուզանդական բանակում⁴։ Միայն ահազ. Բրոսեն, անգրագառնալով Ար. Լաստիվերտցու «Պատմության» համապատասխան էջերին, նկատում է, որ Բաբերդի ճակատամարտում մասնակցություն ունեցան ֆռանկները «կամ ավելի շուտ վարյագները (varégués), որոնք կազմում էին հունական բանակի օժանդակ միավոր»⁵։ Թե ինչ ճանապարհով է եկել հեղինակը այդ, ինչպես ստորև կտեսնենք, ճիշտ եզրակացությունը՝ դժվար է ասել։

Փորձենք քննության առնել այդ նախադասությունը։

Չեռագիր տարընթերցվածքները տալիս են «Ֆռանգք»⁶, «Ֆռանկք»⁷ ձևերը, որոնք խմաստը չեն փոխում։

¹ Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցույ, Վենետիկ, 1844։

² Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցույ, Թիֆլիս, 1912, էջ 97։

³ Արիստակես Լաստիվերտցու վարդապետի հայոց պատմությունը, թարգմանեց Մինաս քահանա Տեր-Պետրոսյանց, Աղեքսանդրոպոլ, 1893, էջ 97։

⁴ Histoire d'Arménie comprenant la fin du royaume d'Ani et le commencement de l'invasion des seldjoukides par Arisdagués de Lasdiverd, traduite par M. Evariste Prud'homme. Paris, 1864, էջ 95։

⁵ M. Brosset, Histoire de la Géorgie, 1-ère partie, S. Petersbourg, 1849, էջ 323, ծան. 4։

⁶ Պատկան Մատենադարան, Հայերեն ձեռագրաց հավաքածու, № 3160, թ. 252ր, № 3502, թ. 401ր, № 1482, թ. 101ա, № 4584, թ. 67ա, № 3070, թ. 105ր, № 6457, թ. 71ա։

⁷ Մատենադարան, № 1895, թ. 39ր, № 2796, թ. 37ա. Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, № 114, էջ 88. № 288, թ. 36ր, № 306, թ. 39ա, № 551, թ. 67ր, № 623, թ. 135ր, № 827, թ. 38ր։ Վիեննայի ձեռագրերի ավյալները ինձ սիրալիր կերպով հաղորդեց ահանափոր բանասեր Ներսես Աղիճյանը, որին օգտվում եմ հանդամանքից հայտնելու իմ շնորհակալությունը։

Այդ նախադասությունը, սակայն, տարօրինակ է հնչում: Ֆոանկները Հայաստանում հայտնի էին առնվազը Շիրակացու ժամանակներից: Այդ բառը միշտ ցույց է տվել ազգային պատկանելություն: Ինչո՞ւ Լաստիվերացին այդպիսի բարդ ձևով պիտի արտահայտեր իր միտքը՝ հոռմեական գունդ, որոնք ֆոանկներ են կոչվում: Տարօրինակությունը, սակայն, վերանում է, երբ դիմում ենք մեկ ձևադրի ևս, ուր համապատասխան տեղում ասված է «գունդ մի ի դօրացն հոռմոց, որ կոչին վռանգլ»¹: Ձեռագիրը Մովսես Խորենացու, Ասողիկի և Արիստակես Լաստիվերացու երկերի ժողովածու է, արտագրվել է ոմն Յոհան գրչի կողմից (թ. 242ր): Գրչագիրը երկու անգամ նորոգվել է, 1567 թ. Իգնատիոս բահանա Ղարասուեցու և 1684 թ. գրիչ Գավրիլ Շնճղուկի ձեռքով: Լաստիվերացու աշխատության մասը (թթ. 242ր—311ր) ենթարկվել է միայն մասնակի նորոգման, տեղ-տեղ վնասված թերթերի վրա թուղթ փակցվել և գրությունը վերականգնվել է: Գրչագիրը արտագրվել է հմուտ ձեռքով, առանց տառասխալների: Բառանշատում շունի, մի քանի քառ դալիս են մեկը մյուսի հետևից: «Է» հնչյունը դրեթի ամենուրեք արտահայտվում է «լ» տառով՝ այդ, Խրայիչ ևն: Գրության մեջ պահպանված են եղ, կորեւն, մեւք արխայիկ ձևերը: «Աւ» երկբարբառը երբեք «օ»-ով չի արտահայտվում՝ զաւր, աւրէն ևն, բացառությամբ մեկ տեղի (թ. 190ր), որը նորոգված է:

Նկատի ունենալով այդ հանգամանքները և հատկապես գրչության ձևը կարելի է համոզված ասել, որ ձեռագիրը ԺԳ, ամենաուշը ԺԳ դարից է և հանդիսանում է, այսպիսով «Պատմության» մեկ հասած հնագույն գրչագիր օրինակը²:

Արդ, ինչ է նշանակում «վռանգր», ովքե՞ր են այդ վռանգները, որոնք մասնակցում են Լաստիվերացու նկարագրած Հակատամարտին:

«Վռանգ» բառը տառադարձված հունարեն Βόραγγος-ն է. Βόραγγος կոչվում էին այն ուռ-սկանդինավ վարձկանները, որոնք գալիս էին Կիևյան Թուսիայից Քյուզանդիա և 10-րդ դարի վերջերից կազմում մի հատուկ զորամաս: Թուսական տարեգրությունները նրանց անվանում էին վարյագներ, варяги:

Այդ բառի հայերեն ձևը մենք չենք գտնի ոչ բառարաններում, ոչ էլ հատուկ ուսումնասիրություններում, նվիրված հայերենի փոխառություններին հունարենից³: Հստ երևույթին պետք է ենթադրել, որ այդ բառը առանձնապես տարածված չի եղել, ինչպես և առհասարակ տարածված չեն եղել հունարենից փոխառված բառերի մեծ մասը⁴: Այնուամենայնիվ, եթե այդպիսի քաջ հայ-

¹ Մատենադարան, № 2865, թ. 279ա:

² Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Մովսեսի Խորենացու Պատմության հայոց՝ աշխատությանը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփլիս, 1913, էջ ԺԹ—ԻԱ, այստեղ սխալմամբ նշված է, որ Կարենյան ցուցակում ձեռագիրը գրանցված է 242 համարի տակ, մինչդեռ ցուցակում այդ ձեռագիրը առհասարակ չկա:

³ C. Brockelmann. Die griechischen Fremdwörter im Armenischen. „Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft“ XLII, 1893, Heft. I. հայերեն թարգմ. «Հանդէս ամսօրեայ» 1894, հունվ. փետր. մարտ, մայիս. H. Hübschmann. Armenische Grammatik, Leipzig, 1837, էջ 322—389. H. Thumb. Die griechischen Lehnwörter im Armenischen, „Byzantinische Zeitschrift“, IX, 1900, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 5—53. նույնի Греческие заимствования в армянском языке. „Византийский вестник“, т. II, 1949.

⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 49:

կարան, ինչպիսին էր Արիստակես Լաստիվերտցին, օդադործել է այդ բառը, ապա պետք է մտածել, որ այն հասկանալի էր հայ ընթերցողին:

Հունարեն բառը տառադարձված է հայերեն՝ համաձայն տառադարձման բնահանուր օրինաչափություններին: Հունարեն β-ն դառել է վ, ինչպես Βασίλειος — Վասիլ: Երկու γ-ն (γγ) հունարեն հնչում են եզ, ու վերջավորությունը ընկել է, այդ դարձյալ տարածված երևույթ է Βούλγαρος — բուլղար¹: Հունարեն ρ-ն կարող է դառնալ «ա» և «բ»: Առաջին α-ն սղվել է, նամանավանդ, որ հունարեն արտասանում էին նաև Βράγγος²:

Վաանդների հետ կապված պրորբիմը հուշել է բաղմաթիվ պատմաբանների, ըստ որում այդ հարցը ֆնուլյան առարկա է դարձել նախ և առաջ ուսական պետության հնադույն պատմության կապակցությամբ: Այդ հարցում բախվում էին նորմանական տեսության կողմնակիցների և հակառակորդների կարծիքները: Իր սպառիչ լուծումը այդ պրորբիմը ստանում է 1874—1875 թթ., երբ հռչակավոր ուսուցչուհի Վ. Գ. Վասիլևսկին հրատարակեց իր «Варяго-русская и варяго-английская дружина» գրքական ուսումնասիրությունը³: Զնայած հողվածի պատկանելի հնություն, ահադ. Վասիլևսկու հիմնական թեզերը մնում են անհերքելի:

Համեմատելով ամենատարբեր աղբյուրներ, ահադ. Վասիլևսկին ապացուցում է, որ վաանդների զորամասի կորիզը կազմում էին ոչ թե սկանդինավները, այլ ուսները: Բյուզանդական պատմիչների համար Ρώς և Βραγγοί անունները հոմանիշ էին: Վաանդները գալիս էին Կոստանդնուպոլիս Կիևյան Ռուսիայով: Ռուսիայում այդ ուս-սկանդինավ զրուժինների կոչվում էին варяг-ներ (սկանդ. vaeringjar վարձկաններ՝ բառից), իսկ Բյուզանդիայում — Βάρραγοι: Վաանդների մի մասը ծառայում էին որպես կայսեր թիկնապահներ, բայց մեծամասնությամբ, կազմելով հատուկ զորամաս, նրանք բանակում էին ասիական սահմաններում կամ հարավային Իտալիայում:

11-րդ դարի կեսերից վաանդների հետ մեկտեղ բյուզանդական բանակում սկսում են ծառայել նաև ֆրանկները, այսինքն հարավ-իտալական նորմանները, իսկ 11-րդ դարի վերջերից՝ վաանդների զորամասում հիմնականում ծառայում են ախ շնգլիացիները, որոնք նորմանական արշավանքի հետևանքով լքում էին հայրենիքը:

Վերջ նշեցինք, որ սելջուկների և վաանդների միջև եղած ճակատամարտը, որը նկարագրում է Ար. Լաստիվերտցին, տեղի է ունենում Բաբերդի մոտ՝ մի երկրամասում, որը վաանդների սովորական բանակատեղին էր:

Սլ իրոք, հայտնի է, որ 1021—1022 թթ. ձմեռը վաանդների զորամասը անց է կացնում Տրապիզոնի մոտ⁴: Վաանդները մասնակցում են Բերկրի քաղաքի պաշարմանը 1033 թ.⁵:

¹ Տե՛ս Н. Нübсschтапп, նշվ. աշխ. էջ 326—327:

² Տե՛ս В. Г. Васильевский, Советы и рассказы византийского боярина XI века. „Журнал Министерства Народного Просвещения“, ч. ССХVI, 1881, էջ 319, ծան. 1:

³ В. Г. Васильевский, Варяго-русская и варяго-английская дружина в Константинополе XI и XII веков. „Труды В. Г. Васильевского“, вып. 1, СПб. 1908.

⁴ В. Г. Васильевский, նշվ. աշխ. էջ 211—212:

⁵ Անդ, էջ 215:

11-րդ դարի կեսերից վուանդների զորամասի հետ հիշվում են նաև ֆրանկներ, որոնք կազմում են նույնպես դաշնակիցների մի գունդ:

1048 թ. վուանդները և վարձկան ֆրանկները կանդնած էին Փոքր Ասիայի խորքում¹: Ուստի անսպասելի չէ, որ Լաստիվերացու նկարագրած ճակատամարտում մասնակցում է վուանդների գունդը: Այդ փաստի մասին խոսում է ոչ միայն հայ, այլև բյուզանդական պատմիչը:

Անդ հետաքրքրող դեպքը տեղի է ունեցել Տուղրուլ-բեկի հայտնի արշավանքի ժամանակ, երբ սելջուկները ասպատակեցին ողջ Հայաստանը, հասնելով մինչև Աբխազիա և Պարթևարի լեռները՝ հյուսիսում, Ճաննթի՝ այն է Խաղաթիբի անտառները՝ արևմուտքում, Սիմ լեռը՝ հարավում: Տուղրուլ բեկը պաշարեց Մանազկերտը, բայց չկարողացավ գրավել և նահանջեց, ճանապարհին սվիբելով Արժկե քաղաքը²:

Ինչպես հայտնում է Արիստակես Լաստիվերացին, այդ արշավանքը տեղի է ունեցել հայոց 503 թ., այսինքն մեր թվարկության 1054—1055-ին: Նախորդ տարում սելջուկները գրավել էին Կարսը և սրի մատնել ժողովրդին, ըստ որում աղատվել էին միայն նրանք, ովքեր փախել էին միջնաբերդ³:

Տուղրուլ բեկի այդ արշավանքի մասին խոսում է նաև 11-րդ դարի հույն պատմիչ Հովհաննես Սկիլիցյան⁴: Սակայն մեզ հետաքրքրող դեպքը արձագանք է գտել մի այլ տեղում: Սկիլիցյան նկարագրում է Տուղրուլ բեկի և սելջուկյան այլ զորավարների՝ Իբրահիմի և Կուտուլմուշի միջև եղած կռիվները: Ասում է, որ Կուտուլմուշը փորձեց բարեկամանալ Բյուզանդիայի հետ և այդ նպատակով դեսպաններ ուղարկեց կայսրին: Միաժամանակ Կուտուլմուշը մոտեցավ Կարսին, պաշարեց այն, գրավեց ամբողջ քաղաքը, բացի միջնաբերդից⁵:

Այդ դեպքից հետո Տուղրուլ բեկ սուլթանը հետապնդելով Կուտուլմուշին դալիս է Իբերիա (Վրաստան): Բյուզանդական կայսրը (այդ ժամանակ դահա-կալում էր Կուստանդին Մանուիլը — 1042—1055) արևմուտքից կանչում է զորավար Միքայելին. «Երբ նա եկավ, — հայտնում է պատմագիրը, — ժողովեց Խաղաթիբում և Իբերիայում ցրված ֆրանկներին և վուանդներին և կասեցրեց սուլթանի առաջխաղացումը» (ὅς ἐκεῖ γενόμενος ἐν τῇ Χαλδία καὶ Ἰβηρία Φραγγούς καὶ Βαράγγους ἀγροχῶς, κωλύειν ἤπειχετο τὸν ἐνόντα τρόπον τὰς ἐκδρομὰς τοῦ σουλτάνου)⁶:

Հստակեցրելու հենց այդ հաջողությունն է նկատի ունի Արիստակես Լաստիվերացին, երբ ասում է. «և յողորմութենէն աստուծոյ զօրացան գունդն

¹ Cedreni, Historiarum compendium, ed. Bonn., II, 1839, էջ 597. В. Г. Васильевский, 2-й. изд. էջ 318—319:

² Տես The Encyclopedia of Islam, fasc. K., Leyden-London, էջ 829, և Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 3-րդ, Երևան, 1952, էջ 47—49:

³ ԺԶ զլուխը, որը վերնագրված է «Վասն գալոյն Սուլթանայ» և ուր նկարագրվում է Տուղրուլ բեկի արշավանքը, սկսվում է այսպես՝ «զկնի այս պատմութեանս, ի զայ տարւոյն էր Թուսկանիս մերոյ ամբ հինգհարիւր երեք...» (Ար. Լաստիվերացի, էջ 93): Նախորդ զլուխը նվիրված է Կարսի պաշարմանը, որը այսպիսով տեղի է ունեցել հայոց 502-ին, այն է՝ 1053/54 թթ.:

⁴ Cedreni, էջ 590—593:

⁵ Անդ, էջ 606: Տես նաև Ար. Լաստիվերացի, էջ 92 «և թէ որ ժամանակս յամուրն կրանել որ ի վերայ քաղաքին կայ, նա միայն սպրեցաւ»:

⁶ Cedreni, էջ 606:

Հուսմոց (իմա՝ «որ կոչին վռանգք») և յաղթեալ թշնամեացն զգլուխ զօրոն սպանին և զբազումս ընդ նմա, և զայսն ի փախուստ զարձուցեալ, զսո և զզերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին յերկարել, բանզի երկեան թէ զուցէ ծանր զօրու հանդիպեցին»¹:

Անդրադառնալով Սկիլիցայի վկայակոչած տեղին, ակադ. Վասիլևսկին գտնում էր, որ վռանգների և սելջուկների բախումը տեղի է ունեցել 1053 թ., ելնելով, ըստ երևույթին, Կարսի պաշարման թվականից²:

Արիստակես Լաստիվերոցու հաավածի ճիշտ ընթերցումը հնարավորութուն է տալիս ճշտելու այդ ճակատամարտի ժամանակը. այն տեղի է ունեցել Տուզլուլ բեկի արշավանքի ժամանակ, այսինքն 1054 թ.³:

Արդյո՞ք քննության առնված հատվածը Արիստակես Լաստիվերոցուց միակ տեղն է հայ աղբյուրներում, որտեղ հիշատակվում են բյուզանդական վռանգները:

Ինչպես հաղորդում են հույն և արաբական պատմիչները, երբ Վարդ Փոկասը ապստամբություն էր բարձրացրել Վասիլ Բ Բուլղարասպանի դեմ, բյուզանդական կայսրի հրամանատարության ներքո կար մի ուսական զորամաս, որին Բյուզանդիա էր ուղարկել Վասիլի զաշնակից Կիևյան իշխան Վլադիմիրը⁴: Ռուսական զորախումբը եկավ Վասիլի քրոջ՝ Աննայի և Վլադիմիրի ամուսնանալու օրոք, երբ Ռուսիան պիտի քրիստոնեություն ընդուներ: Առաջին ճակատամարտը, որին մասնակցեց ուսական զորամասը, Խրիստոպոլիս բաղաքի ճակատամարտն էր, որը տեղի էր ունեցել 988 թ.⁵:

Ահա այդ ուսաներին է հիշում Ասողիկը, երբ պատմում է Վասիլ Բ կայսեր զալստյան մասին Տաչք՝ 1000 թվականին: Վասիլին ներկայանում են ափսազաց թագավոր Բագրատը և վրաց թագավոր Գուրգենը: Գուրգենի մեկնելու օրը հունական բանակում մի ընդհարում է տեղի ունենում: Այս կապակցությամբ պատմագիրը Ռուզաց հետևակազնդի մասին պատմում է հետևյալը. «Եւ սպա բոլոր ազգն Ռուզաց, որ ի տեղուոն յայնմ՝ շարժեցան ի պատերազմ. (զի էին նորա արք 20 (6000) հետևակամարտք, նիզակ և ասպար ի ձեռս նոցա, զորս էր խնդրեալ թագաւորին Վասիլ ի թագաւորէն Ռուզաց, յորժամ եւ զքոյրն իւր կնութեան նմա, յորում ժամանակի և հաւատացին նոքա ի Քրիստոս)»⁶:

Նույն այդ ուսաներին հիշում է վերջապես նաև Արիստակես Լաստիվերոցին Վասիլ Բ-ի արևելյան արշավանքի մասին խոսելիս: Ըստ նրա պատմածի, կայսրին դիմավորում է «ազատագունդ զօրքն Տաչոց» և նա մեծ պարգևներ

¹ Ար. Լաստիվերոցի, էջ 92:

² Անդ, էջ 97:

³ В. Г. Васильевский, *Удѣ. азѣ.* էջ 321:

⁴ Μεταξὺ Πέλλου Βουλγαρινῆς ἱστορίας ἐκατονταετηρίαι, ed. C. Sathas, „Bibliotheca graeca medii aevi“, IV, Parisiis, 1874, էջ 10. Cedreni, էջ 444. Ioannis Zonarae Annales, ed. Bonn., II, էջ 221. В. Р. Розен. Император Василий Болгаробойца. Извлечение из летописи Яхъи Антиохийского, СПб., 1883, էջ 23—24. Примечания, էջ 194—205:

⁵ В. Р. Розен, *Удѣ. азѣ.*, էջ 198. В. Г. Васильевский, *Удѣ. азѣ.*, էջ 199. М. В. Левченко. Очерки по истории русско-византийских отношений. М. 1956, էջ 355—356:

⁶ Ստեփանոսի Տարօնեցու Սոսղկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 276—277:

է շնորհում ազատներին: Այնուհետև կայսրը շարժվում է Ադորի աշխարհը-
Հավաճիչ ամբոցը. «Եւ ոչ գիտեմ յորպիսի պատճառանաց ընդ միմեանս անկեալ
արեմտական զօրն, որ կոչի Լուուզք, և ազատագունդն, և ի նմին տեղոջ մեռան
յազատացն երեսուն այր ի յոյժ պատուարաց»¹:

Այդ սուզները կամ ըսուզները, որոնք 988 թ. կել էին Բյուզանդիա և
մասնակցել 1000 թ. դեպքերին, այն վրանդներն են, որոնց զորագունդը հիշա-
տակված է Արիստակես Լաստիվերացու «Պատմութեան» մեջ²:

Մենք տեսնում ենք, որ մեր հեղինակը նույն վրանդներին մի տեղ անվա-
նում է «ըսուզք», իսկ մյուս տեղում՝ «վրանդք»: Այստեղ նա հեռանում է բյուզան-
դական զրական տրադիցիային. ինչպես ասացինք հույն պատմիչները նույն
զորագունդը անվանում էին և Ῥῶς, և Βορρῆος: Խոսելով վրանդ գին-
վորների մասին, այդ երկու բառը նրանք օգտագործում էին իբրև հոմանիշներ,
և երբևէր մենք տեսնում ենք նաև հայ հեղինակի մոտ:

Վրանդներին հիշում է նաև Մատթեոս Ուռհայեցին:

Ինչպես վկայում են վրաց աղբյուրները, վրաց թագավոր Դավիթ Բ Շինա-
րարի (1089—1125) զորքում կային և վրանդներ, որոնք մասնակցել են
1121 թ. օգոստոսի 15-ին Թբիլիսիի մոտ տեղի ունեցած ճակատամարտին³:
Ելնելով այդ հանգամանքից Ս. Տ. Երեմյանը առաջարկում է ուղղել Մատթեոս
Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հրատարակված բնագրի համապատաս-
խան տեղը, ուր թագավորական զորքերում հիշատակվում են փրանդներ⁴: Նա
գտնում է, որ շփոթությունը գոյացել է Վ և Վ տառերի նմանությունից և փրանդ
բառի փոխարեն առաջարկում է կարդալ վրանդ կամ վրանդ: Այդ դեպքում
Մատթեոս Ուռհայեցու վկայությունը պիտի ընթերցվի՝ Դավիթը «...ունէր և
այլ զօրս ի Խափչախաց թագաւորէն արս տասն և հինգ հազար քաջս և ընտիրս
և յազգէն Ալանաց արս հինգ հարիւր և վրանդ (կամ ավելի հիշար՝ վրանդ)
հարիւր»⁵:

Արիստակես Լաստիվերացու մոտ հայտնաբերած «վրանդք» ձևը առավել
համոզիչ է դարձնում Ս. Տ. Երեմյանի սրամիտ սրբագրությունը:

Այսպիսով պարզվում է, որ վրանդները մի քանի անգամ հիշատակվում են
11—12-րդ դարերի հայկական աղբյուրներում և հայ պատմագիրներից Ասողի-
կը, Ար. Լաստիվերացին և Մատթեոս Ուռհայեցին տեղյակ լինելով վրանդ-
առական զորախմբի գոյության մասին, հաղորդում են ուշադրավ ավյալնեք
նրա գործունեության վերաբերյալ:

¹ Ա. ր. Լաստիվերացի, էջ 4:

² Տե՛ս В. Г. Васильевский, նշվ. աշխ., էջ 200—203:

³ Картлис Цховреба (История Грузии), грузинский текст, т. I, издал С. Кау-
ч и ш в и л и, Тбилиси, 1955, էջ 301:

⁴ С. Т. Еремян. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках.
«Գիտական աշխատություններ Երևանի Պետական համալսարանի», XXIII, 1946, էջ 390:

⁵ Հմմ. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութեան, Վաղարշապատ, 1895
էջ 350: